ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

---------- 2020 ԹՎԱԿԱՆԻ N – Ա

ԳՈՒՅՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ և ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. «Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող Երևան, Կենտրոն, Աբովյան փողոց 9 վարչական շենքը/վկայական N04062020-01-0194/ ՝ 2191,2մ^2 ընդհանուր մակերեսով, 536,608,652 ՀՀ դրամ կադաստրային արժեքով և վարչական շենքի սպասարկման հողամասը/ընդհանուր բաժնային սեփականություն/՝ 0,05685 հա մակերեսով ու 34,098,000 ՀՀ դրամ արժեքով (հաշվարկված ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1746-Ն որոշմամբ հաստատված կարգով) հետ վերցնել Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից և ամրացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Պետական գույքի կառավարման կոմիտեին:
2. Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին և Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո **մեկամսյա** ժամկետում **Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով** ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գույքի հանձնման-ընդունման աշխատանքները:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԳՈՒՅՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Անհրաժեշտությունը

«Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ ՀՀ կրթության և գիտության, ՀՀ մշակույթի և ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունների միաձուլման և նոր՝ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) ստեղծման հետևանքով ներկայումս նախարարությունն իր գործունեությունն իրականացնում է ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2 հասցեի շենքում և նախկին ՀՀ սպորտի և երտասարդության հարցերի նախարարությանն անրացված ք.Երևան, Կենտրոն Աբովյան 9 հասցեի տարածքն նպատակային չի օգտագործվում:

Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

2020թ.-ին հունվարին ավարտվել է նախկին ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության անձնակազմի և նրանց անհրաժեշտ գրասենյակային գույքի տեղափոխման աշխատանքները՝ ք.Երևան, Կենտրոն Աբովյան 9 հասցեի վարչական շենքից ք.Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2 շենք:

Ելնելով պետական գույքի արդյունավետ կառավարման տեսանկյունից նախարարությունն առաջարկում է ք. Երևան, Կենտրոն Աբովյան 9 հասցեում գտնվող, նախկին ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությանն ամրացված տարածքը սահմանված կարգով ամրացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Պետական գույքի կառավարման կոմիտեին:

Կարգավորման նպատակը

Սույն նախագծի ընդունմամբ կիրականացվի պետական գույքի արդյունավետ կառավարում:

Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք

Նախագիծը մշակվել է Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից :

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Գույք հետ վերցնելու և ամրացնելու մասին» Կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացման կամ նվազեցման մասին

«Գույք հետ վերցնելու և ամրացնելու մասին» Կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի սպասվում:

ՏԵՂԵԿԱՆՔ

Կառավարության «Գույք հետ վերցնելու և ամրացնելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացման կամ նվազեցման մասին:

Առարկության, առաջարկության հեղինակ, գրության ստացման ամսաթիվ, գրության համար	**Առարկության, առաջարկության բովանդակություն**	**Եզրակացություն**	**Կատարված փոփոխություններ**
1	2	3	4
1.ՀՀ կադաստրի կոմիտե **04.05.2020թ. h. ՍԹ/2423-2020**	Առաջարկվում է. 1. Նախագծի 1-ին կետի «545410964» թվերը փոխարինել «536608652» թվերով, 2. Նախագծի 1-ին կետի «34098000 ՀՀ դրամ արժեքով» բառերից հետո լրացնել «(հաշվարկված ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1746-Ն որոշմամբ հաստատված կարգով)» բառերով, քանի որ հողի հարկման նպատակով կադաստրային արժեքը կարգավորվում է այլ իրավական ակտով՝ ՀՀ կառավարության 1994 թվականի սեպտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության բնակավայրերի (քաղաքների, քաղաքատիպ ավանների, գյուղերի) հողերի կադաստրային զուտ եկամտի եվ հողի կադաստրային արժեքի ժամանակավոր չափերի հաստատման մասին» N 462 որոշմամբ:	1.ընդունվել է 2.ընդունվել է	1.խմբագրվել է 2.խմբագրվել է
2.Երևանի քաղաքապետարան **30.04.2020թ. h. 01/7-40703h**	Դիտողությունների և առաջարկություններ չունի:		

3.Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն **05.05.2020 թ. հ. ՍՊ//11664-2020**	«Գույք հետ վերցնելու և ամրացնելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտեն առաջարկում է. 1.Նախագծի նախաբանից հանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 685-րդ և 688-րդ հոդվածներին կատարված հղումը և հղում կատարել «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածին: 2.Միաժամանակ հաշվի առնելով, որ համաձայն անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման N 2241958 վկայականի՝ Երևան քաղաքի Աբովյան փողոց 9 հասցեում գտնվող անշարժ գույքի զբաղեցրած հողամասի նկատմամբ գրանցված է **օգտագործման իրավունք**, սակայն «լրացուցիչ նշումներ, փոփոխություններ» բաժնում գրառված է, որ **սեփականատիրոջ** բաժնեմասը ընդհանուր օգտագործման տարածքների և հողամասի նկատմամբ կազմում է 75443/900955, հողամասի տվյալները Որոշման նախագծում ներառելու համար անհրաժեշտ է ճշտել նշված հակասությունը: Հարկ է նշել նաև, որ օգտագործման իրավունքը չի հանդիսանում տնօրինման լիազորություն և ենթակա չէ հանձնման-ընդունման:	1.ընդունվել է 3.	1.խմբագրվել է 2.Կատարվել է անշարժ գույքի մակերեսների չափերի համապատասխանեցում՝ համաձայն ՀՀ կադաստրի կոմիտեի 29.06.2020 թ. հ. ՍԹ/3503-2020 գրությամբ ներկայացված նոր վկայականի **N04062020-01-0194**:
4.Ֆինանսների նախարարություն **06.05.2020թ. հ. 01/8-2/6566-2020**	Դիտողությունների և առաջարկություններ չունի:		

5.ՀՀ կադաստրի կոմիտե **18.05.2020թ. h. ՍԹ/2719-2020**	Առաջարկվում է. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականում և Նախագծի 1-ին կետում նշված անշարժ գույքի մակերեսների չափերի անհամապատասխանությունները շտկելու նպատակով անհրաժեշտ է սխալի ուղղման դիմում ներկայացնել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ, այնուհետև՝ իրավունքի պետական գրանցումից հետո Նախագծի 1-ին կետում կատարել անշարժ գույքի մակերեսների չափերի համապատասխանեցում:	Ընդունվել է	Կատարվել է անշարժ գույքի մակերեսների չափերի համապատասխանեցում՝ համաձայն **ՀՀ կադաստրի կոմիտեի 29.06.2020 թ. h. ՍԹ/3503-2020** գրությամբ ներկայացված նոր վկայականի **N04062020-01-0194**:
6.Արդարադատության նախարարություն 16.07.2020թ. h. **01/27.1/15597-2020**	Դիտողություններ և առաջարկություններ չկան		